«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 109-Լ

ք. Երևան 30 դեկտեմբերի 2024թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2021 ԹՎԱԿՆԱՀ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N73-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով, «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետի և Ինստիտուտի Գիտական Խորհրդի աշխատակարգի 20-րդ կետի 15-րդ ենթակետի, 77-րդ և 78-րդ կետերի դրույթներով՝ Ինստիտուտի Գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ և մասնակի) պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) և պետական կրթաթոշակների և ներբուհական անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականությունը և ընթացակարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 73-Լ որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հավելվածի 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22. Ինստիտուտի վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ

տոկոսի չափով, Ինստիտուտի միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը (80 և ավել ՄՈԳ) և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության մինչև 5,00 սահմանային միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոս, տվյալ ուսումնական տարվա համար,

2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ 50 տոկոս, մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը,

3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոս, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը,

4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս,

5) երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս,

6) երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող, երկու և ավելի ուսանող երեխա ունեցող կամ ընտանիքի երկու և ավելի անդամ ուսանողներին՝ 30 տոկոս,

7) 3-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին՝ 20 տոկոս,

8) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ 30 տոկոս, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը,

9) 2020 թվականի մարտական գործողությունների մասնակցի հայր կամ ամուսին ունեցող սովորողներին՝ 30 տոկոսի չափով՝ եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը,

10) երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին՝ 50 տոկոս. եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 90 տոկոս շեմը,

11) Ինստիտուտում առնվազն 10 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող հիմնական աշխատող կամ հիմնական աշխատողի երեխա ուսանողներին՝ 30 տոկոս,

12) Օլիմպիական խաղերում, աշխարհի առաջնությունում՝

ա. 1-ին տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 60 տոկոս

բ. 2-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 50 տոկոս

գ. 3-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 40 տոկոս

դ. 4-6-րդ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 30 տոկոս

13) Եվրոպայի առաջնությունում՝

ա. 1-ին տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 50 տոկոս

բ. 2-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 40 տոկոս

գ. 3-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 30 տոկոս

դ. 4-6-րդ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 20 տոկոս

14) առանձնահատուկ դեպքերում, ինստիտուտի ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս:»

2) Հավելվածի 41-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«41. Վճարովի համակարգում սովորող ասպիրանտների և հայցորդների համար գործում է 50% և 75 % ուսման վարձի փոխհատուցման համարկարգը, եթե վերջիններս բավարարում են սույն կտի 1-ին, 2-րդ կամ 3-րդ ենթակետերով սահմանված պայմաններից առնվազն մեկին.

1) միաժամանակ ունեն բարձր առաջադիմություն և գտնվում են սոցիալապես անապահով վիճակում (գործազուրկ են կամ ունեն երեքից ավել անչափահաս երեխա, կամ հաշմանդամ կամ խնամքի ենթակա ծնողներ կամ երկկողմանի ծնողազուրկ են),

2) Ինստիտուտում առնվազն 3 տարվա անընդմեջ հիմնական աշխատանքային ստաժ ունեցող աշխատող-հայցորդներին, կամ աշխատողների հայցորդ-երեխաներին,

3) ունեն ավելի քանի 5 տարվա ներդրում Ինստիտուտի ուսումնագիտական գործունեութնա մեջ, միջազգային հեղինակավոր ամսագրերում (web of science, scopus) հրատարակել են գիտահետազոտական աշխատանքներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 3-ից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ